

ԿՐԿՆԱԳՐԻՐ (Bigraphie). — Երեք Հրացանակիրք (Trois Mousquetaires) կոչուած վիպասանութեան հոգակաւոր հեղինակն՝ իւր նորահնար գրութեան ոճովն կը գուարճացընէր մեր աչքերը. գրասեղանին առջեւ նստած և ձեռքը գրիչ մ'առած՝ մի և նոյն ժամանակի մէջ թղթոյն երկու երեսաց վրայ կրկին օրինակ վիպասանութիւն կը գրէր, և այսու կը գոհացընէր իւր հրատարակիչներուն անհամբերութիւնը։ Այս բանս ի սկզբան որչափ որ քիչ մը չափազանցութիւն կ'երեւէր լսողաց, սակայն հիմա իրականութիւն դարձաւ Կրկնագիր գործիքի միջոցաւ։

Կրկնագիր գործւոյն հնարողն է Մարկիսն Լուզովիկ Զոնտի իտալացին։ Այս գործին կը բաղկանայ զուգահեռագիծ կազմած է մի, որուն երկու հաւասարաչափ ծայրերն մի մի գրիչ ունին, և երբ գրագիրն աշակողմեան ծայրը բռնելով կը գրէ թղթին վերայ, ձախակողմեանն ալ ինքնիրեն կը գրէ ռրիչ թղթի մի վերայ, որ բոլորովին յար և նման է ձեռքով գրուածին, այնպէս որ ամենավարժ աչքն անգամ բնաւ զանազանութիւն մի չի տեսներ երկուքին մէջ։ Իւրաքանչիւր գրչին առջեւ առանձին կաղամար մի կայ, այնպէս որ երբ գրագիրն իւր գրիչը կաղամարի մէջ թաթխէ, ձախակողմեան գրիչն ալ մի և նոյն ժամանակ ինքնիրեն կը թաթխէ գրիչը իւր դիմացի կաղամարին մէջ։ Այլ որ կը փափաքի որ գրուածքն լաւ յողի, հարկ է երկու կողման թուղթերն ալ հարթ և հաւասար ընէ։ — Գործիքս այն աղէկութիւնն ալ ունի՝ որ ամենաճարտար կերպով չինուած բլլալով բնաւ մարդոյն ձեռքը չի յագնեցըններ, այլ իրրեւ սովորական թեթեւ գրիչ մի՛ կարելի է դայն գործածել։ Յիրաւի այս գործիքէս առաջ ևս ոմանք հնարած են մի քանի կրկնագիր գործիքներ, սակայն այլ և այլ թերութեանց պատճառաւ անգործածելի կը մնան։

Կ Ա Լ (Առակ)

Օր մի՛ր գեղը՝ մինչ արեւ
Դեռ չ'էր ծագել, կալին վերեւ,
Փունջ փունջ դեղձան որաներ,
Լիք հասկերով շիկաներ.
Ռերին դէզ դէզ խառնափընթոր
Էւ փըռեցին կալը բոլոր.
Թողուցին ձիանք խրատապարանոց,
Ալէկոծեցին հասկերն ոսկեզօծ։
Կալաւածասիրոջ որդին պատանեակ՝
Գեղջկան գործոց, զեռ ևս անտեղեակ,
Կ'ասէր — « անխիղճ և անզուխ
Մարդիկ՝ ձիանք անխըտիր
Կոխեն՝ կոծեն խիստ անփոյթ,

Հասկերն 'ի հող և մոխիր։
Այդ միջոցին մի ծերուկ
— Համբերութիւն—ասաց—տէրուկ,
Մինչև իրիկուն կեցի՛ր տե՛ս
Յետոյ ըզմեզ կը գատես »։
Հասաւ երեկոյն հովերով զովակ,
Ծածանեց օգուն նըրբալիք ծովակ,
Մաքրեց յարդն խալառ ցորենէն մաքուր,
Որ կը ցոյցըլար գերդ սուր բըլուր։
Տեսաւ տըղան ըզգաց խորէն,
Որ չիկոծուած չըլնիր ցորեն։
Էւ յիւտի ամեն մի մարդ
Լաւ չի ծեծւած չըլնիր անյարգ։

Առաքել Նաչրանդեան